


ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

1978


Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻԶ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՑ

ՄԵԾԱԳՈՅՆ ՄՈՆԹՐԷԱԼԻ



**St. Gregory The Illuminator Armenian Holy Apostolic Church
of Greater Montreal**

615 Stuart Ave., Outremont, P.Q. H2V 3H2



Ժխական Խորհուրդոյս այս տարեշրջանի կազմը, շրջապատուած հոգեւոր հովիւ՝ Հոգշ. Տ. Պարէտ Վրդ. Երէցեանէ: Չախէն աջ նստած.- Տոքթ. Հրայր Տէր Գէորգեան՝ Փոխ-ատենապետ, Պրն. Արթո Պասմամեան՝ Ատենապետ, Տոքթ Յարութիւն Արզումանեան՝ Ատենադպիր, Պրն. Գէորգ Փելթէքեան՝ Գանձապահ. ոտքի՝ Պրնք. Գրիգոր Տիգրանեան՝ Հաշուապահ, Արա Կէրիքեան՝ Խորհրդական, Նուպար Պապիկեան՝ Խորհրդական եւ Օննիկ Պալեան՝ Փոխ-ատենադպիր: Նկարէն կը բացակայի՝ Պրն. Սուրէն Շիշմանեան:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ն Ն

Հրաւեր եւ ժողովի օրակարգ էջ 3
 Սահմանադրական կանոններ էջ 4
 Հովիւի տեղեկատուութիւն էջ 5-7
 Ժխական Խորհուրդի տեղեկատուութիւն էջ 8-11
 Եկեղեցւոյ Յանձնախումբերու տեղեկատուութիւն. էջ 12-18
 Ժխական Խորհուրդոյ հաշուետուութիւն. էջ 19-20
 Եկեղեցւոյ Յանձնախումբերու հաշուետուութիւն էջ 21-24
 Հաշուեյարդար էջ 25
 Նախահաշիւ 1 9 7 9 տարուան էջ 26
 Թեկնածուներու ցանկ էջ 27
 -Պատրաստուած Ընտրողական Յանձ.ի կողմէ-

ՄԱՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԼՈՐԻԶ ՄԱՅՐ ՏԱՂԱՐ

CATHÉDRALE ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

Հ Ր Ա Ռ Է Ր ՏԱՐԵԿԱՆ ԱՆՊԱՄԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ

Մոնթրէալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայաստանեայց Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւն ու ծխական Խորհուրդը այսու կողմէն 264 հրաւիրելով՝ Տարեկան Անդամական Ընդհանուր Ժողովի, որ պիտի գումարուի

պիւնի, 25 Փետրուար 1979, ժամը 15.00-ին

Եկեղեցւոյ Մարի Մանուկեան Սրահին մէջ:

Իւրաքանչիւր արտու անդամի պարտականութիւնն է ներկայ գտնուիլ սոյն կարեւոր Անդամական Ժողովին, որուն օրակարգի նիւթերն են հետեւեալները.

Օ Ր Ա Կ Ա Ր Գ :-

- 1- Աղօթք եւ բացում.
- 2- Ընտրութիւն օրուան դիւանի.
- 3- Ընթերցում նախորդ ժողովի ատենազրուեցան եւ վաւերացում.
- 4- Անդրադարձում նիւթա-բարոյական տեղեկ. եւ վաւերացում.
- 5- 1979 տարուան նախահաշիւի վաւերացում.
- 6- Ընտրութիւն ծխական Խորհուրդի 5 անդամներու.
- 7- Ընտրութիւն Հաշուեքննիչ Մարմնի 3 անդամներու.
- 8- Ընտրութիւն Ընտրողական Յանձ.ի 5 անդամներու.
- 9- Թելադրութիւններ եւ գնահատում.
- 10- Ընտրութեանց արդիւնք.
- 11- Փակման խօսք եւ օրհնութիւն:

ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒ
ԵՒ ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Յ.Գ. Կը խնդրուի իւրաքանչիւր անդամէն ուսումնասիրել իրենց ղրկուած տեղեկատուութիւնը, որպէսզի ժամանակ չկորսուի Ընդհ. Ժողովի ընթացքին, անգամ մը եւս կարդալով:

Պիտի խնդրէինք մեր անդամներէն, որ բարեհաճին իրենց անձամբ ներկայ ըլլալ եւ հետեւին ընկերացող ոչ-անդամներ չբերել, տեղի դրութեանց պատճառով:

ԿԱՆՈՆՆԵՐԻ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՑ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

- ՅՕԴՈՒԱԾ 5- ծխական ժողովը կը կազմուի բոլոր այն անձերէն՝ որոնք մկրտուած եւ դրոշմուած են Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ, կ'ընդունին անոր վարդապետութիւնը, կանոններն ու ծէսերը եւ կը կատարեն եկեղեցւոյ ու համայնքին վերաբերմամբ իրենց պարտականութիւնները: Այսպիսի անձինք կ'ըլլան ծխական եկեղեցւոյ եւ անոր ծխական ժողովին իրաւասու անդամները:
- » 6- ծուխի մը իւրաքանչիւր անդամ՝ 18 տարիքը լրացուցած, պարտաւոր է իր պատկանած եկեղեցւոյն վճարել տարեկան տուրք մը, որուն քանակը կ'որոշուի թեմական Պատգամաւորական ժողովին կողմէ, եւ որ կրնայ ծխական ժողովի կողմէ յաւելում կրել, սակայն չի կրնար նուազեցուիլ:
- » 7- ծխական եկեղեցւոյ մը 18 տարիքը լրացուցած իրաւասու անդամները իրաւունք ունին նոյն ծուխի ծխական ժողովներուն մասնակցելու եւ քուէ տալու, պայմանաւ, որ առ նուազն վեց ամիս անցած ըլլայ իրենց անդամակցութենէն ասդին եւ իրենց անդամատուրքերը վճարուած ըլլան: Կըրնան ընտրուիլ, իրենց անդամագրութենէն մէկ տարի ետք, եթէ 21 տարեկան եղած են:
- » 8- Այն անդամները՝ որոնք զանցառու գտնուած են վճարելու մէկ կամ աւելի տարուան անդամատուրքերը՝ նովին իսկ գործով կը կորսնցնեն ծխական ժողովներու մէջ քուէարկելու եւ ծուխէն ներս պաշտօնի ընտրուելու իրենց իրաւունքները: Նման անդամներ կրնան վերստանալ այս իրաւունքները, վճարելով իրենց գէթ վերջին երկու տարուան յետնեալ անդամատուրքերը:

ԿԱՆՈՆՆԵՐԻ ԾԽԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

- ՅՕԴՈՒԱԾ 16- ծխական ժողովի հրաւերը պէտք է դրկուի գրաւոր իւրաքանչիւր անդամի անհատապէս, ժողովի թուականէն առնուազն մէկ շաբաթ առաջ եւ պէտք է պարունակէ ժողովին օրակարգը: Ժողովին օրակարգը կը պատրաստուի Հովիւի եւ ծխական Խորհուրդի կողմէ: Օրակարգին վրայ կ'աւելցուին նոր հարցեր, ծխական ժողովի մեծամասնութեան քուէով:
- » 17- ծխական ժողովը օրինաւոր կը համարուի, քուէարկու անդամներու առնուազն մէկ-երրորդի կամ յիսուն անդամներու ներկայութեամբ, եւ որոշումներ կ'առնուին ներկայ եւ քուէարկու անդամներու մեծամասնութեամբ:
- » 22- Իւրաքանչիւր անդամ ունի միայն մէկ քուէի իրաւունք՝ որ փոխանցելի չէ, եւ անձամբ պէտք է տրուի: Քուէից հաւասարութեան պարագային, նախագահը կուտայ վճարական քուէն կամ կը թոյլատրէ երկրորդ քուէարկութիւն մը՝ նոյն հարցին մասին:

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ
ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒՒ
1 9 7 8 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

Սիրելի ծխականներ,

Աստուծոյ շնորհքով եւ ողորմութեամբ տարի մը եւս բոլորեցինք այս գաղութէն ներս, որպէս անդամները Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայաստանեայց Եկեղեցւոյ, միշտ անսասան պահելով մեր հաւատքն ու նուիրումը ոգին հանդէպ մեր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

Այս տարի եւս Հոգշ. Տ. Կոմիտաս Աբղյ. Շէրպէթճեան, ուսանող Մաքսիլ Համալսարանի Աստուածաբանական Ծիւղին, օգնեց ինձի անխփան Կիրակի օրերը եւ այլ խորհրդակատարութեանց ընթացքին:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ: Սրբազան Պատարագը անխփան կատարւեցաւ մէն Կիրակի եւ տօնական ու կրօնական տօներուն առթիւ: Ուրախ եմ ըսելու, որ մեր ջանքերով Կոմիտաս Դպրաց Դասու վարչութեան գործակցութեամբ եւ Դպրաց Դասու անդամներուն զօրոգութեամբ, կրցինք այս տարի հերթական կարգ մը սահմանել սարկաւազներու եւ դպիրներու, որպէսզի եկեղեցին մէն Կիրակի ունենայ մասնաւոր դպիրներ մեր սրբազան արարողութիւնները պայծառ պահելու համար: Շնորհակալութեան պարտք կը զգամ յայտնել մեր Սարկաւազաց Դասուն, իրենց գործօն մասնակցութեան, որոնց շընորհիւ Ս. Սեղանին սպասարկութիւնները կատարուեցան անթերի կերպով, մէն Կիրակի երկուական սարկաւազներու մասնակցութեամբ: Կոմիտաս Դպրաց Դաս- Երգչախումբը այս տարի ունեցաւ իր տաղանդաւոր ղեկավարը՝ Երաժշտագէտ-Երգեհոնահար Պրն. Արթօ Միւլէնտիսեանը, շընորհակալութիւն, իրեն բերած կարեւոր մասնակցութեան համար, շնորհակալութեան բաժին մը եւս՝ Տիկ. Թենթիւնեանին, որպէս օգնական երգեհոնահար, իր բերած մասնակցութեան համար:

ԽՈՐՀՐԴԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԾէՍԵՐ: 1978 տարեշրջանին կատարուեցան հետեւեալ խորհրդակատարութիւններն ու ծէսերը. Մկրտութիւն եւ դրոշմ՝ 53, Ս. Պսակի արարողութիւն՝ 17, Թաղման կարգ՝ 29 հատ:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ: Այս տարուան ընթացքին, ունեցանք այցելու հոգեւորականներ մեր գաղութէն ներս, որոնց անուններն ու գալու շարժառիթները արժանագրուած են ծխական խորհուրդիս տեղեկատուութեան մէջ:

ՀՈՎՈՒԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ: Մեր կարելիութեան սահմաններուն ներքեւ եւ մեզի եղած լրատուութեանց համաձայն, հիւանդանոցներու եւ բնակարաններու մէջ, այցելեցինք հիւանդներու եւ տարեցներու, ջանալով միիթարել իւրաքանչիւրը:

Այս առթիւ կը յիշեցնենք մեր համայնքի անդամներուն, որ եթէ կը փափաքին մեր այցելութիւնը որեւէ ձեւով, համին տեղեակ պահել մեզ, դիմելով եկեղեցւոյս դիւանատունը:

Հ. Ե. Ե. Կ. Ա. : Ուրախ ենք յայտնելու մեր անդամներուն, որ մեր անձնական ջանքերով յաջողեցանք դարձեալ ոտքի հանել եւ կազմակերպել, ի չգոյէ մեր Եկեղեցւոյ երիտասարդութիւնը որոնք արդէն սկսած են աշխատիլ եկեղեցւոյ շուրջ իրենց գործօն մասնակցութեամբ: Արդէն իսկ կազմուած են վարչութիւններ՝ մեծերու

եւ փոքրերու: Կը յուսանք եւ կ'աղօթենք որ մեր այս Աստուածահաճոյ գործը չխաթարուի մեր ժողովուրդի անտարբերութեան պատճառաւ. քիչեր որպէս ծնողք հետաքրքրուեցան իրենց զաւակները դրկելու: Կը մաղթենք, որ եկեղեցւոյս հանդէպ մեր ժողովուրդին ունեցած սէրը աւելի յայտնի ըլլայ արարքով, քան թէ խօսքով:

ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՅԱՆՉՆԱԽՈՒՄՔ: 1978 տարեշրջանը եղաւ դրական տարի մը Եկեղեցւոյ Տիկնանցին համար թէ բարոյապէս եւ թէ նիւթապէս: Այս տարեշրջանին Տիկնանցը կրցաւ օգտագործել իրենց համար պատրաստուած ծրագիր-կանոնագիրը, որուն գործադրութեան համար իրենց բերած հասկացողութիւնը քաջալերական եւ դրական էր: Մենք, մեր կարելի սահմաններուն մէջ ջանացինք միշտ ներկայ ըլլալ իրենց վարչական եւ ընդհ. ժողովներուն:

Կ'աղօթենք, որ Աստուծոյ օրհնութիւնը անպակաս ըլլայ իրենց եկեղեցանուէր գործունէութեան մէջ:

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ՄՇԱԿ. ՅԱՆՉՆԱԽՈՒՄՔ: Ենորհակալութեամբ կ'ողջունենք Մ.Միկոնեան Մշակ. Յանձնախումբի մասնաւորաբար այն գործունէութիւնը որ օգտակար հանդիսացաւ զիրքերու վաճառքով, ծանօթացնելով մեր մշակոյթը հայ եւ օտարներուն:

ՇԱՐԱԹՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ: Տարւոյն սկիզբէն, մօտէն հետաքրքրուեցանք Շարթօրեայ վարժարանի աշխատանքներով եւ ուսումնական ծրագիրով, մասնաւորաբար հրաւիրելով նիւ Եորքէն Օր. Սիլվա Տէր Ստեփանեանը, որ միասնաբար աշխատանքներ տարաւ Խնամակալութեան եւ Ուսուցչական կազմին հետ: Մասնաւոր շնորհակալութիւն Խնամակալութեան անդամներուն եւ Ուսուցչական կազմին, իրենց անվերապահ նուիրումին եւ գործակցութեան:

ԸՆԿԵՐԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ: Հպարտութեամբ եւ ուրախութեամբ կ'ողջունենք դարձեալ մեր անդամներուն ուշադրութեան յանձնել թէ՛ Եկեղեցւոյս գրասենեակը երբեք չէ խնայած որեւէ մէկ ազգօգուտ ծառայութիւն մեր ժողովուրդին: Թիւով շատեր որոնք դիմած են մեր դիւանատունը իրենց ընկերային անհրաժեշտ կարիքներուն համար եւ գրեթէ բոլորն ալ ձեռնունայն դուրս չեն ելած, մասնաւոր շնորհակալութիւն Պրն. Վահէ Զէթլիին, որ իր բարի նկարագիրով եւ պարտականութեան գիտակցութեամբ եւ այս հարցերու կապակցութեամբ ունեցած իր հմտութեամբ գիտցաւ ժամանակը տրամադրել օգտակար հանդիսանալով գրեթէ բոլոր դիմողներուն; մասնաւորաբար կառավարական դիմումնագիրներու եւ նպաստներու ապահովման գծով:

ԱՐՏԱՔԻՆ ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ: Զանացինք միշտ կապ պահել կառավարական շրջանակներուն հետ, ի մասնաւորի ներգաղթի նախարարութեան գրասենեակներուն հետ, անձամբ տեսակցելով եւ ներկայ ըլլալով տեղի ունեցած մամլոյ հաւաքոյթներուն եւ ընկերային հրաւերներուն:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ: 1978 տարեշրջանին, ուշադրութեամբ եւ մօտէն հետաքրքրուեցանք մեր Եկեղեցւոյ պաշտօնաթերթ «Բուրաստան»-ի հրատարակութեան: Այստեղ անգամ մը եւս կ'ողջենք մեր շրջանորհակալութիւնները յայտնել Տորթ. Յ. Արզումանեանին եւ բոլոր խմբագրական կազմին, իրենց մատուցած անգնահատելի ծառայութեանց համար: Ենորհակալութեան մասնաւոր բաժին մը եւս թէքէեան Մշակ. Միութեան, որ իր ցուցաբերած անվերապահ սպասարկութեամբ մեր ամսաթերթի տպագրութիւնը դարձատիպ եւ արդիական ներկայանալի վիճակով լոյս տեսնելու պատեհութիւնը ընձեռեցին:

ՀՈԳԵՒՈՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ: Անցեալ տարուան ընթացքին, մեր կարողութեան ներած չափով, կրցանք մեր Օթառայի քոյր համայնքին հոգեւոր կարիքները մատակարարել, այցելե-

յով ծուկին, կազմակերպել պատարագներ եւ ընկերային հաւաքոյթներ: Մեր կարողութեանց ներած չափով, դարձեալ կրցանք թորոնթոյի քոյր համայնքին հոգեւոր կարիքներուն հասնիլ, հովիւի բացակայութեան:

Անցեալ տարուան ընթացքին, ներկայ գտնուեցանք Առաջնորդարանի կողմէ եղած հրաւերներուն, մասնակցելով Պատգամաւորական ժողովին, Կարաց Դասերու համագումարին եւ այլ վարչական հանդիպումներուն:

ԱՅԼ ԺՐԱԳԻՐՆԵՐ: Ուրախութեամբ եւ խանդավառ ոգիով, անցեալ տարի սկսանք մշակութային մեծ ծրագրի մը, որ գրեթէ երկու տարուան ծրագիր մըն է հայ Օրտարապետական կոթողներուն նրմոյշները պատրաստելով, արուեստագէտ Պրն. Տիրան Գալայճեանի ձեռամբ: Երախտագիտութեան մասնաւոր խօսք ունինք Տիար Յակոբ Զէսթէքեանին, իրեն բերած օժանդակութեան համար, մօտ 2000 տուար, այս ծրագրին իրագործման համար, իրեն անունին նուիրուեցաւ առաջին նմոյշը՝ Հաղբատի զանգակատունը:

Պիտի խնդրենք մեր անդամներէն, որ նկատի ունենան այս կարեւոր ձեռնարկը եւ իրենց նուիրատուութիւններուն մէջ յիշեն այս ծրագիրը:

ԵՆՈՐՀԱԿԱԼԻԲ: Մասնաւոր շնորհակալութեան խօսք ունինք, յատկապէս Պրն. Միսաք Կուսուզեանին, իր անձնուէր եւ բարեխիղճ ծառայութեան, մեր Եկեղեցւոյ հաշիւներուն բարւոք եւ ճշգրիտ պատրաստութեան աշխատանքները սիրայօժար տարած ըլլալուն համար:

Մասնաւոր շնորհակալութիւններ մեր ծիսական Խորհուրդի անդամներուն, որոնց անշահախնդիր գործակցութեան ոգին, դիւրացուց մեր բերոր այս գաղութէն ներս: Ցաւով կ'ուզենք յայտնել, թէ Պրն. Սուրէն Շիշմանեան այլեւայլ պատճառներով, գրեթէ պատասխանատուութեան բաժին չվերցուց իրեն սահմանուած պարտականութեանց մէջ, որ Ընդհ. Անդամական ժողովին կողմէ իրեն վստահուած էր:

Շնորհակալութեան մասնաւոր խօսք, Եկեղեցւոյս Պատգամաւորներուն, իրենց պարտականութեան նկատմամբ ունեցած անաչառ կեցուածքին, ինչպէս նաեւ Եկեղեցւոյս գրասենեակին Դիւանապետ Պրն. Վ. Բէթլիին, իր անձնագոհ ոգիին եւ բերած աշխատութեանց համար:

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ: Նկատի ունենալով անցեալ տարուան ընթացքին մեր անդամներուն շատցող թիւը եւ ծագած անհասկացողութիւնները, յետ այսու կը թելադրենք մեր ժողովուրդին, որ որեւէ պարագային, Եկեղեցւոյս անդամակցութեան համար հաճին անձամբ ներկայանալ եկեղեցւոյ գրասենեակը, առիթ ընծայելով հոգեւոր հովիւին մօտէն ծանօթանալու անհատներուն եւ դրութիւնը ընծայել հարցուփորձերու եկեղեցւոյ ծիսական եւ կանոնական կարգ մը պարագաներու շուրջ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ: Կը հայցենք Տիրոջմէ, որ Եկեղեցւոյս իւրաքանչիւր անդամին պարգեւէ արեւշատութիւն եւ բարգաւաճութիւն ի փառս Աստուծոյ Եկեղեցիին եւ Հայ Ազգին: Կ'աղօթենք որ Աստուած իր երկնաւոր շնորհքը առաւել եւս բաշխէ մեր ժողովուրդին, գիտակցութեան եւ նուիրումի ծամբայէն ներս, մանաւանդ Եկեղեցւոյս նկատմամբ, զօրավիգ կանգնելով անոր յառաջդիմութեան եւ պայծառութեան:

Մնամք սիրով աղօթարար
ՊԱՐԷՏ ՎՐԴ. ԵՐԷՑԵԱՆ

պարտեւ Լոյ. Երջեան

Մոնթրեալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց Եկեղեցւոյ ծխական խորհուրդի 1978 տարեշրջանի առաջին նիստը գումարուեցաւ 8 Մարտ 1978-ին, նախազանութեամբ Հոգեւոր Հովիւ՝ Հոգշ. Տ. Պարէտ Վրդ. Երէցեանի: Անդրանիկ նիստին, ժողովը կազմեց իր դիւանը ըստ հետեւեալին.

- ՊՐՆ. ԱՐԹՕ ՊԱՄՄԱԾԵԱՆ \ Ատենապետ
- ՏՈՔԹ. ՀՐԱՅՐ ՏԷՐ ԳԷՈՐԳԵԱՆ \ Փոխ-ատենապետ
- ՏՈՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ \ Ատենադպիր
- ՊՐՆ. ՕՆՆԻԿ ՊԱԼԵԱՆ \ Փոխ-ատենադպիր
- ՊՐՆ. ԳԷՈՐԳ ՓԵԼՔԷՔԵԱՆ \ Գանձապահ
- ՊՐՆ. ԳՐԻԳՈՐ ՏԻԳՐԱՆԵԱՆ \ Հաշուապահ
- ՊՐՆ. ՍՈՒՐԷՆ ՇԻՇՄԱՆԵԱՆ \ Խորհրդական
- ՊՐՆ. ՆՈՒՊԱՐ ՊԱՊԻԿԵԱՆ \ "
- ՊՐՆ. ԱՐԱ ԿԷՐԻՔԵԱՆ \ "

Այս տարեշրջանին ծխական խորհուրդը գումարեց 43 հերթական եւ մէկ բացառիկ ժողովներ: Խորհուրդոյս հրաւէրով, Եկեղեցւոյ անդամներուն հետ գումարուեցան մէկ լուսաբանական եւ մէկ մասնաւոր անդամական ժողովներ:

ԼՈՒՍԱՔԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ. - Ընդառաջելով Եկեղեցւոյ 64 անդամներու գրաւոր դիմումին, ուր տեղեկութիւն կը խնդրուէր՝ Գանատայի Առաջնորդութեան կազմութեան եւ Փոխ-Առաջնորդութեան կապակցութեամբ, եւ նկատի ունենալով որ բանաձեւուած հարց մը չկար, այլ միայն տեղեկութիւններ կ'ակնկալուէին, յետ խորհրդակցութեան Առաջնորդ Սրբազան Հօր հետ եւ ըստ Թեմիս Կանոնադիր ժողովի տրամադրութիւններուն, Խորհուրդս հրաւիրեց Եկեղեցւոյ անդամները լուսաբանական ժողովի մը, որ տեղի ունեցաւ Ապրիլ 28-ին Եկեղեցւոյ Մարի Մանուկեան սրահին մէջ:

ՄԱՄՆԱԽՈՐ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ. - Անցեալ ընդհանուր անդամական ժողովին փափաք յայտնուած էր կարգ մը անդամներու կողմէ, որ Եկեղեցւոյ պատգամաւորները տեղեկութիւն տան Պատգամաւորական ժողովին մասին: Ուրեմն, ըստ Կանոնադիր-ժրագրի տրամադրութիւններուն, Խորհուրդս մասնաւոր անդամական ժողով մը կայացուց՝ «Ձեկոյց Պատգամաւորներու Կողմէ», օրակարգով: Այս ժողովը տեղի ունեցաւ Յունիս 6-ին Եկեղեցւոյ Գարիպեան սրահին մէջ: Եկեղեցւոյ Պատգամաւորները մանրամասն տեղեկութիւններ ներկայացուցին Թեմիս Պատգամաւորական ժողովին մասին, յատկապէս անդրադառնալով Գանատայի Առաջ. Փոխնորդութեան եւ Գանատան առանձին Թեմի վերածելու կապակցութեամբ Պատգամաւորական ժողովին մէջ տեղի ունեցած զաղափարներու փոխանակումէն:

ՅԱՐԱՔԵՐԱԿԱՆՔ. - Խորհուրդս կարելիութեան բոլոր միջոցներով ջանաց, համագործակցութեան ոգիով յարաբերութիւններ մշակել իր գանազան կազմակերպութիւններու հետ, յամախակի հանդիպումներ ունենալով անոնց վարչութիւններուն հետ, եւ քաջալերելով ու գործակցելով անոնց ձեռնարկներուն, ապահովելու համար համայնքային համապարբակ գործունէութիւն մը: Ենորհիւ հոգեւոր հովիւ՝ Հ. Պարէտ Վրդ. Երէցեանի ջանքերուն, այս տարուան ընթացքին վերակազմուեցաւ Եկեղեցւոյ Երիտասարդաց Յանձնախումբը - Հ.Ե.Ե.Կ.Ա.-:

Նոյնպէս, Խորհուրդս փոխադարձ յարգանքի եւ գործակցութեան ոգին մշակեց մեր բոլոր կազմակերպութիւններու հետ, ինչպէս, Հ.Բ.Ը.Մ. Պոլսահայ Միութիւն, Թէքէեան Մշակ. Միութիւն, Արմէն-Քէպէք Ալեք Մանուկեան վարժարան, Ռ.Ա.Կ., եւ այլն:

Խորհուրդս, դարձեալ կարելիութեան սահմաններուն մէջ, կապ պահեց Օթաուայի մեր փոքրաթիւ գաղութին հետ, մեր Հոգեւոր Հովիւին եւ Կոմիտաս Կարաց Երգչախումբին հետ, հոգալով նաեւ անոնց եկեղեցական ու հոգեւոր կարիքները:

Շ է Ն Բ.- Խորհուրդս իր ժամանակին եւ գործունէութեան մէկ կարեւոր մասը յատկացուց Եկեղեցւոյ կալուածին որոշ անյետաձգելի նորոգութիւններու եւ բարեգարդումներու իրականացման: Այս աշխատանքներուն մէջ իրենց անփոխարինելի բաժինը բերին, իբր կալուածի պահպանման յանձնախումբ, Խորհուրդոյս անդամներէն՝ Պրնք. Գրիգոր Տիգրանեան եւ Արա Կէրիբեան:

Ա- ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆՆԵՐ

1- ԵԿԵՂԵՑԻՈՅ ՇԷՆԲ: Եկեղեցւոյ տանիքը, տարիներու ընթացքին գոյացած մեղքերէ ջուր կ'անցնէր պատերէն ներս վնասելով ներքին եւ ընդհանուր մաքրութեան: Անհրաժեշտ նորոգութիւնները կատարուեցան մօտ 6000 տուար արժողութեամբ: Այս նորոգութիւններէն անմիջապէս ետք, Եկեղեցւոյ մայր մուտքի պատերուն ներկի եւ բարեգարդման աշխատանքները կատարուեցան:

2- ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՍՐԱՀ: Սրահի պատուհանները արդիական ալիւմինիում շրջանակներով նորոգելու անհրաժեշտ աշխատանքը կատարուեցաւ եւ ամբողջացաւ արժելով մօտ 4000 տուար: Ուսումնասիրուեցան սրահի օդի փոփոխութեան (վանթիլէյշէն) եւ բարեխառնութեան (էր-քոնտիշինինկ) միջոցները. առջին պարագային՝ պիտի արժէր 1600, իսկ երկրորդ պարագային՝ 21,000 տուար: Այս աշխատանքը, պատուհաններու նորոգութենէն ետք ըլլալիք գործ մըն էր եւ ուրեմն, կը մնայ յաջորդ ծիական Խորհուրդին, որոշել երկու դրութիւններէն մին եւ գործադրել զայն: Այս տարեշրջանի ընթացքին շարունակուեցաւ սրահին կից խոհանոցի արդիականացումը, նոր սարքաւորումներու յաւելումով: Կատարուեցան նաեւ սրահի բոլոր աթոռներու նորոգութեան աշխատանքները: Նաեւ փոփոխութեան ենթարկուեցան լուսարաններու անձեռոցներու դրութիւնը, լաթէն՝ աւելի առողջապահական թուղթի դրութեան:

Բ- ՎԱՐՉԲ: Այս տարի, Արմէն-Բէպէք վարժարանի մանկապարտէզի դասարաններու գործածութիւնը դադրեցաւ եկեղեցիէն ներս, վարժարանը սեփական եւ նոր կալուածով մը օժտուած ըլլալով: Նոյնպէս, դադրեցաւ էյ.էյ ընկերակցութեան Վաչէ Յովսէփեան սրահի շաքաթը մէկ օրուան գործածութիւնը: Եկեղեցւոյ սրահները սակայն, շարունակուեցան վարժքով գործածուելի թէ ազգային եւ թէ օտար կազմակերպութիւններու կամ անհատական ձեռնարկութիւններու կողմէ, ըստ նախապէս որոշեալ սակացոյցի մը:

Գ- ԺԱՄԿՈՉ ԵՒ ՀՈԳԱՏԱՐ: Եկեղեցւոյս անցեալ տարեշրջանի ժամկոչ եւ հոգատար՝ Պրն. Օննիկ Թիւլպէնտեան, վիզայի դժուարութիւններու պատճառաւ, հակառակ մեր բոլոր ջանքերուն, ստիպուած եղաւ վերադառնալ Յունաստան, Ապրիլ 16-ին: Խորհուրդս յարմար նկատեց պաշտօնի կոչել նախկին ժամկոչ եւ հոգատար՝ Պրն. Պօղոս Տէմիրճեանը, որ իր տիկնոջ հետ յանձնառու եղաւ եկեղեցւոյ հսկողութեան եւ մաքրութեան աշխատանքին:

ԱՅՏԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ.- Այս տարեշրջանի ընթացքին, հաճոյքը ունեցանք ընդունելու բարձրաստիճան հոգեւորական եւ ազգային դէմքերու այցելութիւնը: Թուրքիոյ Հայոց Պատրիարք՝ Ամեն. Տ. Շնորհք Արք. Գալուստեան նոյեմբեր ամսուան ընթացքին այցելեց համայնքս չորս օրուան համար, յատկապէս օժանդակութիւն ապահովելու համար Թուրքիոյ զաւառներէն Պուլիս ապաստանած հայերու:

Ամերիկայի Արեւմտեան Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան համայնքս այցելեց Հոկտեմբեր ամսուան ընթացքին եւ նախագահեց Արմէն-Քէպէք Ալեք Մանուկեան վարժարանի բացման արարողութեան եւ այդ առթիւ Ս. Պատարագ մատոյց Եկեղեցւոյս մէջ:

Ընդունեցինք նաեւ այցելութիւնը Տիթրոյթի Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Հոգշ. Տ. Փառէն Ծ. Վրդ. Աւետիքեանի եւ Քան-ի հոգեւոր հովիւ՝ Հոգշ. Տ. Տարօն Ծ. Վրդ. Ժէրէմեանի այցելութիւնը, նոյնպէս Մայր Աթոռ Ս. Էջմիածինէն Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Վեհ. Հայրապետի հոգեւորական ներկայացուցիչները, որոնք մասնակցեցան Թեմիս Պատգամաւորական ժողովին, իրենց վերադարձի մամբուն վրայ, այցելեցին նաեւ մեր համայնքը:

Աշխարհական հանրածանօթ ազգայիններու շարքին, այս տարի Եկեղեցւոյս մէջ ընդունեցինք այցելութիւնը Հ.Բ.Ը.Միութեան ցկեանս նախագահ՝ Տիար Ալեք Մանուկեանի, ազնիւ Տիկնոջ եւ իր արժանաւոր որդւոյն՝ Բիչըրտ Մանուկեանի, ինչպէս նաեւ Հ.Բ.Ը.Մ.-ի Ամերիկայի նախագահ՝ Տիար Եղուարդ Մարտիկեանի:

ՁԵՌՆԱՐԿՆԵՐ.-

Ա- ՏէՊիոթանթսերոռ ՊԱՐԱՀԱՆԴԵՍ.- Եկեղեցւոյս գլխաւոր ձեռնարկն է՝ Տէպիւթանթներու պարահանդէսը: Այս տարի, աննախընթաց յաջողութեամբ նշուեցաւ 10-րդ տարեդարձը այս պարահանդէսին: Ժխական Խորհուրդի անմիջական գործակցութեամբ, կազմակերպիչ Յանձնախումբը այս տարի գլխաւորեց Պրն. Դարօ Ալեքեան: Այս առթիւ, Ժխ. Խորհուրդս անգամ մը եւս կը փափաքի հրապարակաւ իր ջերմագին շնորհակալութիւնները եւ գնահատանքը յայտնելու Պրն. Դ. Ալեքեանի եւ իր Յանձնախումբի ժրջան անդամներուն, որոնք բացառիկ յաջողութեամբ մը պսակեցին այս ձեռնարկը: Հ. Պարէտ Վրդ. Երէցեանի ջանքերուն շնորհիւ, այս տարի բախտաւորութիւնը ունեցանք իբր պարահանդէսի պատուոյ նախագահ ունենալ Հ. Բ.Ը. Միութեան Ամերիկայի նախագահ՝ Տիար Եղուարդ Մարտիկեանը, որ այս առթիւ Եկեղեցւոյս նուիրեց 5000 տուարի գումար մը:

Բ- ԵՂԵՌՆԻ ՅՈՒՇԱՏՕՆ.- Ապրիլ 24-ի Մեծ Եղեռնի Յուշատօնը այս տարի եւս նշուեցաւ Եկեղեցական եւ ժողովրդային յայտագրերով: Հանդիսաւոր Ս. Պատարագի եւ հոգեհանգրստեան արարողութեանց կողքին, որպէս նորութիւն, Ապրիլ 24-ի մտնող գիշերը, մոմավառ Եկեղեցական պատկարելի թափօրը եւ հոգեւոր յայտագիրը եղան խիստ տպաւորիչ: Յայտագիրներուն մասնակցութիւն բերին՝ Պոլսահայ Միութիւն, Թէքէեան Մշակ-Միութիւն, Արմէն-Քէպէք վարժարան եւ Բ.Ա.Կ.:

Գ- ԺԱՇԿԵՐՈՅԹ Ի ՊԱՏԻՒ ԹՈՒՐԲԻՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԷՒՆ.- Հովանաւորութեամբ ժխական Խորհուրդիս եւ կազմակերպութեամբ տեղւոյս Պոլսահայ Միութեան, սիրոյ սեղան մը սարքուեցաւ Եկեղեցւոյ Մարի Մանուկեան սրահին մէջ, որուն ընթացքին մօտ 13,000 տուար գոյացաւ սրտաբուխ նուիրատուութիւններէ:

Դ- ՆՈՐԱԶԵՒՈՒԹԵԱՆ ՅՈՒՑՀԱՆԴԵՍ.- Յատկապէս ժխական Խորհուրդի ջանքերով այս տարի փորձուեցաւ նոր ձեռնարկ մը, «Ֆէշըն 20», որ տեղի ունեցաւ «Սիմփսըն» հաստատութեան կողմէ Մարի Մանուկեան սրահին մէջ, Ապրիլ 30-ին: Յայտնուեցաւ որ այս ժողովրդական ձեռնարկը կրնայ հասութաբեր ըլլալ Եկեղեցիին:

Ե- ՋԱՏԿՈՒԱՆ ՀԱՒԿԻԹՄԵՐ.- Վերջին քանի մը տարիներուն, ծխական խորհուրդի նախաձեռնութեամբ եւ ՏԻԿ- նանց Միութեան օժանդակութեամբ է որ կը կատարուի ականդական Ջատկուան գունաւոր հակիթներու կողովիկներով պատրաստութիւնը եւ վաճառքը: Այս տարի եւս, նախորդ տարիները գերազանցելով, հատութաբեր կերպով գործադրուեցաւ այս ձեռնարկը, շնորհիւ Տիկնանց Միութեան ժրջան անդամակներուն եւ խումբ մը անձնուրաց ազգայիններու տարած անվատ աշխատանքներուն:

Զ- ՋՐՕՍԱՊՏՈՅՏ.- Ծխական խորհուրդը, կազմակերպութեամբ՝ Տիկ- նանց Միութեան եւ կոմիտաս Դպրաց Դասին, նախաձեռնեց տարեկան զրօսապտոյտին դէպի «Տրամընվիլ»ի գեղատեսիլ վայրը Յուլիս 2-ին, որ դարձեալ արձանագրեց բացառիկ յաջողութիւն մը:

Է-ՕՐԱՑՈՅՑ.- Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս հրատարակուեցաւ Գանատայի Առաջ. Փոխանորդութեան պատի օրացոյցը եւ տարածուեցաւ Մոնթրէալի, Թորոնթոյի եւ Օթաւայի մէջ:

Ը- ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ.- Եկեղեցւոյս 2որս պատգամաւորները, ինչպէս նաեւ Հոգեւոր Հովիւը եւ խորհուրդոյս Ատենապետը մասնակցեցան Տիթրոյթի մէջ Մայիս 4-5-6 թրականներուն գումարուած Թեմիս տարեկան Պատգամաւորական ժողովին, բերելով իրենց դրական ներդրումը ժողովի գործունէութիւններուն:

Այս տարեշրջանի աննախընթաց երեւոյթներէն մին էր նաեւ այն պարագան թէ՛ Մայիս եւ Յունիս ամիսներու ընթացքին, զանգուածային նոր անդամներու դիմումներ ներկայացուեցան Եկեղեցւոյս դիւանատունը: Որովհետեւ անդամարշալ մը չէր կազմակերպուած ծխական խորհուրդին կողմէ, ինչպէս եղած էր անցեալին, եւ որովհետեւ յայտնապէս ճիգ մը կար դիմումները ներկայացնելու այս ընդհանուր ժողովէն 6 ամիս առաջ, այս երեւոյթը որոշ մտահոգութիւններ պատճառեց ծխ. խորհուրդիս, որ պարտաւոր զգաց տեղեկացնել այս մասին Առաջնորդ Սրբազան Հօր եւ Թեմական խորհուրդին: Յետ քննութեան, նոր դիմումները, քիչ բացառութեամբ, ընդունուեցան:

Ծխական խորհուրդս այսու կուգայ իր խորին շնորհակալութիւնները եւ երախտիքը յայտնելու հոգեւոր հովիւ՝ Տ. Պարէտ Վրդ. Երէցեանի, իր ցուցաբերած խնդավառ նուիրումին եւ սերտ գործակցութեան համար: Նոյնպէս շնորհակալութիւն բոլոր այն կազմակերպութիւններուն եւ ազգայիններուն որոնք օգտակար հանդիսացան մեր եկեղեցական ու ազգային գործունէութիւններուն, կարելի դարձնելով այս տարեշրջանը բոլորելու բեղուն գործունէութեամբ մը:

Ունինք մասնաւոր շնորհակալութեան խօսք խորհուրդոյս շրջանաւարտ անդամներուն, որոնք անձնագոհ ոգիով, իրենց կարելին բերին եկեղեցւոյ ընթացիկ հարցերու մտակարարման: Յատկապէս յիշատակելի է Պրն. Գէորգ Փելթեքեանի նուիրեալ ծառայութիւնը, որ երբ շրջան-վեց տարի-շաբաթաւոր բերաւ օրինակելի կանոնաւորութեամբ եւ բժախնդրութեամբ իր օգտակար մասնակցութիւնը խորհուրդիս գործունէութեանց:

Ի դիմաց Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդին

Արթօ Պասամեան
ատենապետ

Տոքթ. Յ. Արզումանեան
ատենադպիր

Կոմիտաս Դպրաց Դասու ներկայ վարչութիւնը, որ ընտրուեցաւ 20 Փետրը-
վար 1978-ին կայացած տարեկան անդամական ընդհանուր ժողովին, իր անդ-
րանիկ նիստը զուամբելով նոյն թուականին իր դիւանը կազմեց **Ինտելեալ**
կերպով.

- | | |
|----------------------------------|---------------|
| ԲԱՐՇ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍՐԿ. ՍՐՄԱՔԷՇԵԱՆ՝ | Ատենապետ |
| ՊՐՆ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԻՐՔՃԵԱՆ | Փոխ-ատենապետ |
| ՊՐՆ. ՎԱՀԷ ԲԷՐԷՍԹԷՃԵԱՆ | Ատենադպիր |
| ՊՐՆ. ԱՇՈՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ | Փոխ-ատենադպիր |
| ՊՐՆ. ԳՐԻԳՈՐ ԳԱՆԱՐ | Գանձապահ |
| ՊՐՆ. ՎԱՀԱԳՆ ԱՐԱՊԵԱՆ | Հաշուապահ |
| ՊՐՆ. ՅԱԿՈՐ ԿԷՐԻՔԵԱՆ | Գոյքապահ |

30 Օգոստոս 1978-ին Պրն. Յ. Բիւրքճեան առողջական պատճառաւ հրաժա-
րած ըլլալով, ներկայ վարչութիւնը իր պաշտօնը շարունակեց 6 հոգիով:

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ.- Այս տարեշրջանին վարչութիւնս զուամբած է 21 վար-
չական եւ 2 մասնաւոր անդամական ժողովներ, որոնց նախագահած է Հոգչ. Տ.
Պարէա Վրդ. Երէցեան: Եկեղեցւոյս Դպրաց Դասը ներկայիս հարստ է ունենա-
լով 37 հոգինոց առական երգչախումբ մը, որ մինչեւ Օգոստոս 1978 դեկա-
վարուած է անձնուէր վարիչ՝ Պրն. Յակոբ Յնձալեանի կողմէ: Պրն. Յ. Յըն-
ձալեանի սոյն պաշտօնէն հրաժարելէն յետոյ, 21 Օգոստոս 1978-ին տեղի
ունեցած մասնաւոր անդամական ընդհ. ժողովը միաձայնութեամբ սոյն պաշտօ-
նին կոչեց Պրն. Արթօ Միւհիւտիսեանը եւ Պրն. Վահան Շաքարեանը որպէս
փոխ վարիչ ու ներկայիս անոնց ջանքերով է որ՝ երգչախումբը կը կատարէ
իր փորձերն ու Ս. Պատարագի բազմաձայն երգեցողութիւնները:

Դպրաց Դասը այս տարի, իր մասնակցութիւնը բերած է նաեւ Օթառուայի մէջ
տեղի ունեցած Վարդավառի տօնակատարութեան 12 հոգինոց երգեցիկ խումբով
մը: Այս տարեշրջանին վարչութիւնս իր առաջին մասնակցութիւնը բերած է
Ամերիկայի Հայց. Եկեղեցւոյ դպրաց դասերու տարեկան համագումարին, որ
տեղի ունեցաւ 3-4-5 նոյեմբերին Պոսթոնի մէջ: Ինչպէս անցեալին, այս
տարի եւս Դպրաց դասըս իր գործնական մասնակցութիւնը բերաւ կազմակեր-
պուած Միացեալ Պաշտամունքին, գնահատուելով ներկայ հայ եւ օտար հաւա-
տացեալներուն կողմէ անխտիր: 22 Հոկտ. 1978-ին Դպրաց Դասըս լրիւ կազ-
մով ներկայ եղաւ Արմէն-Քէպէք Ալեք Մանուկեան Հ.Բ.Ը.Մ. նորակառոյց վար-
ժարանի բացման արարողութիւններուն: 26 նոյեմբերին տեղի ունեցաւ Դասու
կազմութեան 20-րդ տարեդարձի հանդիսութիւնները հոգեւոր եւ աշխարհիկ ա-
րարողութիւններով, այս առթիւ կատարելով նաեւ հոգհ. յատուկ պաշտօն դա-
սէն անդարձ հեռացող անդամներու հոգիներուն համար:

24 Ապրիլին Եղեռնի տարեդարձին առթիւ կազմակերպուած եկեղեցական բա-
ցառիկ արարողութեանց պատշաճ մասնակցութիւնով, դպրաց դասըս գնահատուե-
ցաւ բոլորէն: Այս տարեշրջանին, Դպրաց Դասը կրկին կազմակերպեց իր տա-
րեկան պարանցիկ երեկոյթը, որ տեղի ունեցաւ 29 Ապրիլին, արձանագրեց
փայլուն յաջողութիւն մը: 9 Յուլիսին տեղի ունեցաւ Եկեղեցւոյ տարեկան
դաշտագնացութիւնը Տրամընվիլի մէջ, կազմակերպութեամբ Տիկնանց եւ Դա-
սուս միացեալ ուժերով, հաճելի օր մը ապրեցուց ներկայ եղողներուն:

Կոմիտաս Դպրաց Դասի վարչութեան ջանքերով պատրաստուեցաւ գեղեցիկ
եպիսկոպոսական աթոռ մը, որ եկաւ փայլը աւելցնելու Ս. Եկեղեցւոյս:

Հոգեւոր Հովիւին եւ վարչութեան ջանքերով ստեղծուեցաւ դպիրներու
հերթական մասնակցութիւն մը, որ ցարդ կը շարունակուի անխափան կերպով:

Դասուս բոլոր գործունէութիւնները կարելի եղաւ իրագործել շնորհիւ
մեր բարեպաշտ ժողովուրդին, իր իրենց ներկայութեամբ եւ նիւթական առա-

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ
ԱՏԵՆԱՊԵՏՆԵՐՈՒ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲԻ
1 9 7 8 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

Նախորդ տարուան Ընդհանուր Անդամական Ժողովին կողմէ պաշտօնի կոչուած Ժիւական Խորհուրդներու նախկին ատենապետներէն բաղկացած Ատենապետներու Յանձնախումբը, այս տարեշրջանին, հազիւ մի քանի ժողովներով, շանաց իր կարելին ընել օգտակար ըլլալու համար Եկեղեցւոյ:

Նախանցեալ տարուան վերջաւորութեան պատրաստուած ծրագիրներու լայն տեղեկատուութիւն մը յանձնուեցաւ Ժիւական Խորհուրդին առ ի գիտութիւն եւ վաւերացում:

Պարտքի Շիջման հաշւոյն դրամատան մէջ գտնուող եւ տարբեր ժամանակներով տոկոսի դրուած հաշիւները, յանձնախումբիս ջանքերով վերածուեցան միակտուր մէկ հաշիւի, որպէսզի անոնց տոկոսները ըլլան աւելի շահաբեր:

Յառաջիկային համար նկատի առնուեցան հասոյթ ապահովող գործառնութիւններ, ինչպէս նաեւ հասութեան կալուածներու գնումներ որոնք սակայն երկար ժամանկի կը կարօտին:

Յոյսով ենք, որ այս մարմինը, յառաջիկայ տարուան ընթացքին, պիտի կարողանայ աւելի յամախակի կատարել իր ժողովները եւ շարունակել իր պարտականութիւնը ի փառս մեր Եկեղեցւոյ

Ի դիմաց

ԱՏԵՆԱՊԵՏՆԵՐՈՒ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲԻ

Վ. Բէթլի
Ատենադպիր

Ե. Շիջմանեան
Ատենապետ

Պատճառն քաջալերանքով, ամէն առիթով զօրավիզ կանգնեցաւ մեր աշխատանքներուն: Դպրաց Դասըս ամէն զնով ջանացած է եւ կը ջանայ պայծառ պահել Մեր Ս. Եկեղեցին ի փառս հայ պատուական ժողովուրդին եւ ի փառս Հայց. Առաքելական Եկեղեցւոյ

Ի դիմաց կոմիտաս Դպրաց Դաս Վարչութեան
Յ. Սրմաքէշեան
ատենապետ

Վ. Բէրէսթէժեան
ատենադպիր

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ
ԵԱԲԱԹՕՐԵԱՅ ՀԱՅ ՎԱՐՃԱՐԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԵԱՆ
1 9 7 8 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

Եկեղեցւոյ Շաբաթօրեայ վարժարանի 1978-79 դպրոցական տարեշրջանի դասաւանդութիւնները սկսան 16 Սեպտեմբեր 1978-ին, Արմէն-Քէպէք Ալեք Մանուկեան Հ.Բ.Ը.Մ. նորակառոյց վարժարանին մէջ: Ներկայ տարեշրջանի տեսչութեան պաշտօնը կը վարէ՝ Գրն. Օննիկ Գալուստեան: Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւը, Դպրոցին Տեսուչն ու Ուսուցչական կազմը նուիրումով կը զբաղին իայ պատանիին հոգեւոր եւ ազգային դաստիարակութեամբ:

Վարժարանի ուսումնական եւ ոչ-ուսումնական ծրագիրներով կը զբաղի վարժարանի խնամակալ Մարմինը:

Վարժարանի խնամակալ Մարմինը, հովանաւորութեամբ՝ Հոգշ. Տ. Գարէտ Վրդ. Երէցեանի, կը բաղկանայ հետեւեալ անհատներէ.

- Տիկ. ԷԼՏԱ ԱԳԳԻՊՐԻԹԵԱՆ՝ Ատենապետ
- Օր. ՅԱՍՄԻԿ ՄԱՆԿԱՍԱՐԵԱՆ՝ Ատենաղպիր
- Գրն. ՎԱՀԷ ՔԷՐԷՍԹԷՃԵԱՆ՝ Գանձապահ
- Տիկ. ՎԱՐԴՈՒՀԻ ԳԱԼԵԱՆ՝ Խորհրդական
- Օր. ՄԱՐԱԼ ԶԱԳՈՒՆԵԱՆ՝ Խորհրդական

Շաբաթօրեայ վարժարանը 1978-79 դպրոցական տարեշրջանը սկսաւ եօթը դասարաններով եւ հետեւեալ ուսուցչական կազմով.

Տիկ. ԱՆԳԻՆԷ ԵԱԲԱՐԵԱՆ	=	Ա. դասարան
Օր. ՆԻՆԱ ԾԵՐՈՒՆԵԱՆ	=	Բ. " "
Տիկ. ԵՆՈՐՀԻԿ ԳՐԻԳՈՐԵԱՆ	-	Դ. " "
Տիկ. ԲԵԲԵԿԱ ԹԱՇՃԵԱՆ	-	Ե. " "
Գրն. ՕՆՆԻԿ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ	-	Զ. " "
Տիկ. ԱՆԱՀԻՏ ԷՎՐԷՆՍԷԼ	-	Է. " "
Գրն. ՅԱԿՈՐ ԱՆԿԱԼԱԹԵԱՆ	-	Ը. " "
Գրն. ՎԱՀԱՆ ԵԱԲԱՐԵԱՆ	-	Երաժշտութիւն
Տիկ. ԹԷՆԹԻՒՆԵԱՆ	-	Երաժշ. օժանդակ

Ներկայիս Շաբաթօրեայ վարժարանը ունի մօտ 60 աշակերտ, որոնց երթեւեկը կ'ապահովուի Ալեք Մանուկեան Ամենօրեայ վարժարանի սեփական օթօպիլսներով:

Դպրոցին մէջ կը դասաւանդուին՝ իայերէն լեզու, գրականութիւն, ազգային պատմութիւն, կրօնք եւ երաժշտութիւն:

Նոյեմբեր 24, 1978-ին, Օր. Սիլվա Տէր Ստեփանեան՝ հեղինակ շաբաթօրեայ իայ վարժարաններէն ներս գործածուող իայերէն դասագրքերու, եւ Առաջնորդարանի Կրթական Տեսուչը, իիստ շահեկան հանդիպում մը ունեցաւ դպրոցին Ուսուցչական Կազմին հետ: Ան իր թելադրութիւններն ու մատնանշումները ըրաւ իայ ուսուցիչը հետաքրքրող ուսումնական հարցերու շուրջ: Յաջորդ օրը, նոյեմբեր 25-ին, Օր. Ս. Տէր Ստեփանեան դրպրոց այցելեց եւ անձամբ ներկայ եղաւ դասաւանդութեանց: Ան աւելի վերջ հանդիպում մը ունեցաւ ծնողներու հետ եւ պատասխանեց անոնց հարցումներուն:

24 Դեկտեմբեր 1978-ին, տեղի ունեցաւ աշակերտներու յատուկ Տօնածառի հանդիսութիւն մը դպրոցին սրահին մէջ: Հանդիսութեան ներկայ էին Հոգեւոր Հովիւն ու խնամակալ Մարմինը: Հանդիսութեան ընթացքին գործադրուեցաւ կոկիկ յայտագիր մը բաղկացած՝ երգերէ, արասանութիւններէ, պարերէ եւ արամախօսութենէ: Հանդէսին վերջաւորութեան աշակերտներուն բաշխուեցաւ զանազան նուէրներ:

Ի. Ազգիպրիթեան
ատենապետ

Յ. Մանկասարեան
ատենաղպիր

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ
ՄԱՐԻԿՈՆԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՉՆԱՍՈՒՄԲԻ
1 9 7 8 ՏԱՐԵՐՋԱՆԻ

Ուրախութեամբ կ'արձանագրենք, թէ Յանձնախումբս, ինչպէս անցեալին մէջ, այս տարի եւս բոլորեց ներքին համերաշխութեան եւ սերտ գործակցութեան շրջան մը:

Յանձնախումբիս անդամ էին հետեւեալ անձերը.

- ՊՐՆ. ՆՈՒՐԶԱՆ ՈՒԶՈՒՆԵԱՆ \ Ատենապետ
- ՊՐՆ. ԿԱՐՕ ԵԱՄԼԵԱՆ \ Փոխ-ատենապետ
- ՏԻԿ. ԱՐԱՔՍ ԱՐԹԻՆԵԱՆ \ Ատենադպիր
- ՏՈՔԹ. ԹԱԳԻՈՐ ԹՈՒՃԵԱՆ \ Հաշուակալ-գանձապահ
- ՊՐՆ. ԱՐՏԱԽԱԶԴ ՍՏԵՓԱՆԵԱՆ \ Խորհրդական
- ՏԻԿ. ԺՈՐԺԷՍ ՍՏԵՓԱՆԵԱՆ \ "
- ՊՐՆ. ՆՈՐԱՅՐ ԱՐԹԻՆԵԱՆ \ "
- ՏԻԿ. ԱՆԱՀԻՏ ԵԻՇՄԱՆԵԱՆ \ "
- ՊՐՆ. ՄԿՐՏԻՉ ՂԱԶԱՐԵԱՆ \ "
- ՊՐՆ. ԱՇՈՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ \ "

Տարուան առաջին գործունէութիւնը եղաւ այն դասախօսական երեկոյթը, որ կազմակերպուեցաւ Պոլսահայ Միութեան Մէկ Մշակ. Մարմնին հետ: Տիթրոյթի հոգեւոր հովիւ՝ Տ. Փառէն Ծ. Վրդ. Աւետիքեան հրաւիրուած էր ներկայացնելու պատմական Հայաստանի յուշարժաններու եւ հայկական ընկալաբերութիւններու վիճակը: Այս ներկայացումը կատարուեցաւ լուսապատկերներու միջոցաւ, զորս Հայր Սուրբը անձամբ նկարած էր Թուրքիոյ մէջ այս նպատակաւ կատարած իր շրջագայութեան ընթացքին:

Յանձնախումբիս տարեկան զլխաւոր գործունէութիւնը եղաւ պատրաստութիւնը ծայնապնակի մը, որ կը պարունակէ հայ դասական դաշնամուրային երաժշտութեան նմոյշներ, կատարողութեամբ դաշնակահար՝ Նորայր Արթինեանի: Այս ձեռնարկը իրագործելու համար Պետութեան ներկայացուցինք զորագիր մը, որու ի պատասխան ստացանք 2250 տոլարի պետական օժանդակութիւն, այն պայմանաւ, որ պատրաստելիք ծայնապնակէն ձրիաբար պիտի տրամադրուին համալսարաններու, երաժշտանոցներու, էթմիք կազմակերպութիւններու եւ պետական ռատիօկայաններու:

Նկատելով, որ ծայնապնակին պատրաստութեան ծախսը շատ աւելի է, քան ստացուած պետական օժանդակութիւնը, կը խորհինք տարբերութիւնը զոցել եւ նոյնիսկ որոշ շահ մը ապահովել ծայնապնակին մնացած օրինակները վաճառելով: Այս առնչութեամբ, Յանձնախումբս պարտաւոր է հաշիւ ներկայացնել Պետութեան պատկան գրասենեակին, երբ գործը աւարտի: Նոյն հաշիւը պիտի կարենանք նաեւ ձեզի ներկայացնել մեր յաջորդ հաշուետուութեան ժամանակ:

Յանձնախումբիս մնայուն զլխաւոր մէկ գործունէութիւնն է նաեւ հայագիտական գիրքերու վաճառումը, որով կը խորհինք սատարել հայկական մշակոյթի տարածումին: Այս գործը արտաքնապէս երեւցածէն շատ աւելի աշխատանք ու ժամանակ կը պահանջէ, որուն միակ վարձատրութիւնը պիտի ըլլայ ժողովուրդին ցուցաբերած հետաքրքրութիւնը:

Ի դիմաց Մամիկոնեան Մշակ. Յանձնախումբի

Ն. Ուզունեան
ատենապետ

Ա. Արթինեան
ատենադպիր

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ
 ՎՐԱՄԱՍՏԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹԻ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲԻ
 1 9 7 8 ՏԱՐԵՇՐԱՆ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ պաշտօնաթերթ ՎՐԱՄԱՍՏԱՆԻ տարի մը եւս հրատարակուեցաւ անխափան կերպով ամէն ամիս: Նախորդ տարիներուն նման, Օգոստոս եւ Սեպտեմբեր ամիսներուն միացեալ թիւ մը լոյս տեսաւ:

Այս տարեշրջանի սկզբնաւորութեան, Պրն. Նուրհան Ուզունեան, որ մօտ տարիէ մը ի վեր ստանձնած էր ՎՐԱՄԱՍՏԱՆԻ պատասխանատու խումբագրի պաշտօնը, հրաժարեցաւ այդ պաշտօնէն, եւ հոգեւոր հովիւ՝ Հոգշ. Տ. Պարէտ Վրդ. Երէցեանի թելադրանքով, ծխական Խորհուրդը այդ պարտականութիւնը յանձնեց Տոքթ. Յարութիւն Արզումանեանի: Նոյնպէս, ՎՐԱՄԱՍՏԱՆԻ Յանձնախումբէն նոյնժամանակ հրաժարեցաւ Տիկ. Արաքս Արթինեան: ՎՐԱՄԱՍՏԱՆԻ Յանձնախումբի մնացեալ անդամներն են. Պրնք. Միսաք Կուսուզեան, Օննիկ Գալուստեան, Գրիգոր Գըլմեան, Սերոբ Գուլումեան եւ Վահէ Զէթլի:

Իր գոյութեան 11 տարիներու ընթացքին հետզհետէ բարելաւուելով, այս տարի ՎՐԱՄԱՍՏԱՆԻ քայլ մը եւս յառաջացաւ, արդիական Ղարձատիպ դրութեամբ տպագրուելով, բան մը՝ որ հանդէսը դարձուց աւելի ներկայանալի, դիւրընթերցելի եւ թոյլատու նկարներու աւելի ազատ գործածութեան: Այս կապակցութեամբ յատուկ շնորհակալական խօսք ունինք Մոնթրէալի Թէքէեան Մշակ. Միութեան, որ գործակցութեան բարձր ոգիով, սիրայօժար կերպով տրամադրեց Վազայ շաքաթաթերթի սարքաւորումները: Մեքենագրական այս արդիական դրութեան աշխատանքը կը տանի Եկեղեցւոյս դիւանապետ եւ ՎՐԱՄԱՍՏԱՆԻ Յանձնախումբի ատենադպիր՝ Պ. Վահէ Զէթլի:

Շնորհակալութեան անկեղծ խօսք ունինք մեր Հոգեւոր Հովիւին, որ մօտէն հետաքրքրուեցաւ եւ գործնական մասնակցութիւնը բերաւ ՎՐԱՄԱՍՏԱՆԻ կանոնաւոր հրատարակման աշխատանքին մէջ: Նաեւ շնորհակալութիւն կը յայտնենք մեր բոլոր աշխատակիցներուն, որոնք սիրայօժար կերպով բերին իրենց մասնակցութիւնը:

Տօքթ. Յ. Արզումանեան
 ատենապետ

Վահէ Զէթլի
 ատենադպիր

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ
ՀԱՇՈՒԵՔՆՆԻՉ ՅԱՆՉՆԱՍՈՒՄԲԻ
1 9 7 8 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Յարգոյ Անդամ-Անդամուհիներուն,

Պատրաստեցինք Ս. Գր. Լուսաւորիչ ծխական Խորհուրդի մուտքի
եւ ելքի, ինչպէս նաեւ հաշուեկշիռի ցուցակները 31 Դեկտեմբեր
1978 թուականի:

Հիմնուելով վերոյիշեալ Խորհուրդի տոմարներու եւ ստացուած
տեղեկութիւններու վրայ, կեդրոնացուցինք մեր աշխատանքը մաս-
նաւորաբար հաշուակալական տուեալներու վրայ. քննեցինք, բաղ-
դատեցինք եւ հարցաքննութեան ենթարկեցինք ստացուած տեղեկու-
թիւնները:

Սոյն ելեւմտական ցուցակները, ստացուած տեղեկութիւններուն
ու փաստաթուղթերուն լոյսին տակ պատրաստուեցան, հաշուակալա-
կան ընդունուած օրէնքներու հիման վրայ, որդեգրելով նախորդ
տարիներու հաշուակալական սկզբունքներն ու ձեւը: *

Ի ղիմաց Հաշուեքննիչ Յանձնախումբի

		Իվան Բրուտեան	Անդրանիկ Չատրճեան
		Հաշուակալ	Մասնագէտ հաշուակալ
* որպէս	Ա. Ե. Ե.	Ե. Գ. Ե.	Ե. Գ. Ե.
Տնօրէն	Ե. Գ. Ե.	Ե. Գ. Ե.	Ե. Գ. Ե.

Ե. Գ. Ե.

ՆԻՒԹԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ
 ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՈՅ
 1 9 7 8 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

Մ Ո Ւ Տ Ք

	<u>31.12.78</u>	<u>31.12.77</u>
Եկեղեցւոյ մոմավառութենէ եւ պնակէ	10,954 *	12,155
Եկեղեցւոյ կալուածէն (Հ.Բ.Ը.Մ. եւ Դպրոց) .	5,805	5,231
„Բուրաստան„ ամսաթերթէ	4,272	5,500
Շաբաթօրեայ վարժարանէ	10,116	3,943
Խորհրդակատարութիւններէ	8,065	7,769
Անդամավճարներէ	14,463 *	5,250
Վճարումներ Պարտքի Շիջման	2,382	1,907
Նուէրատուութիւններէ	23,107	1,100
Իւղազին նուէրատուութիւններէ	7,084 *	34,505
Պատի օրացոյցներէ	421	6,151
Դրամատան տոկոսէ	2,468	891
Գրասենեակի գանազան մուտքերէ	937	1,508
ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԷ ԵՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԷ Շաբաթօրեայ դպրոցի ձեռնարկէ	2,760	---
Զատկուան հաւկիթներու վաճառքէ	3,077	2,400
<u>ՊԱՐԱՀԱՆԴԷՍԻ ՅԱՆՁՆԱՍՈՒՄԲԷ</u> Մախկին հաշիւներէ	21,329	2,285
1977-ի յետամնաց գանձումներէ	310	---
1978-ի շահ	22,040	---
1978-է գանձուելիք	<u>8,926</u>	---
Զովացուցիչի մեքենայէ	500	5,712
Նորածնուութեան ցուցահանդէսէ	353	---
Նախկին Երիտասարդացէ մնացած գումար	454	---
Եկեղեցասէր Տիկնանցէ	8,000	5,000
Դպրաց Դաս եւ Մամիկոնեանէ	---	1,500
Զանազան ձեռնարկներէ	---	2,804
Պոլսոյ Պատրիարքարանի հիմնադրամ	9,525	3,065
Տարեկան եկամուտ .	<u>149,496</u>	<u>108,676</u>

32,501

ՆԻՒԹԱԿԱՆ ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԻՒՆ
ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՈՅ
1 9 7 8 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

Ե Լ Ք

	<u>31.12.78</u>	<u>31.12.77</u>
Եկեղեցւոյ պաշտօնէութեան	23,223	17,446
Հոգեւորականի ինքնաշարժի	6,037	---
Եկեղեցւոյ ծախսերու	8,649	---
Կալուածի պահպանութեան	22,447	25,535
Կալուածի գլխաւոր նորոգութեանց եւ գնումներու	13,750	17,518
«Բոլրաստան» ամսաթերթի	4,833	4,485
Շաբաթօրեայ վարժարանի	12,111	10,446
Գրասենեակի ծախսերու	4,857	4,260
Զանազան գործունէութեանց եւ ընդունել	369	1,156
Պարտքի Շիջման Յանձ.ի փոխանցուած	5,000	---
Առաջնորդարանի տուրք ի նիւ եորք	9,000	11,376
Պոլսոյ Պատրիարքարանի հիմնադրամի	---	3,065
	<hr/>	<hr/>
Տարեկան ելք	110,276	95,287
Մուտքի առաւելութիւն ի դէմ ելքի	39,220	13,389
Պատրաստ գումար Յունուար 1-ին	<u>26,964</u>	<u>13,575</u>
Պատրաստ գումար Դեկտեմբեր 31-ին	66,184	26,964

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԻՒՆ
ՊԱՐՏՔԻ ԵԻՋՄԱՆ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲԻ
1 9 7 8 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

Մ Ո Ւ Տ Ք

	<u>31.12.78</u>	<u>31.12.77</u>
Պարահանդեսի Յանձնախումբէ	- - -	5,000
„ԵՈԼՆԱՅԹՐԹ ԶՐՐՀ” տարեկան վարձքէ	4,000	4,000
Անդամատուրք եւ նուիրատուութիւններէ	- - -	5,190
Դրամատան տոկոսէ	3,576	3,055
Տիկնանց Օժանդակ Յանձ.-հաշուփակում-	- - -	7,057
Ժխական Խորհուրդէ	<u>5,000</u>	<u>- - -</u>
Տարուան եկամուտ	12,576	24,302

Ե Լ Ք

Կալուածի պարտքի վճարումներու	12,500	12,500
Կալուածի պարտքի տոկոսի	3,453	4,266
Դրամատան ծախսերու	2	2
Տարեկան ելք	<u>15,955</u>	<u>16,768</u>
Մուտքի առաւելութիւն ի դէմ ելքի	- - -	7,534
Ելքի առաւելութիւն ի դէմ մուտքի	3,379	- - -
Պատրաստ գումար Յունուար 1-ին	<u>49,878</u>	<u>42,344</u>
Պատրաստ գումար Դեկտեմբեր 31-ին	46,499	49,878

ՆՈՒՅՄԱԿԱՆ ՀԱՇՈՒՅՏՈՒՈՒԹԻՒՆ
ԿՈՄԻՏԵԱՍ ԴՊՐԱՑ ԴԱՍՈՒ
1 9 7 8 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

<u>Մ Ո Ւ Տ Ք</u>	<u>31.12.78</u>	<u>31.12.77</u>
Եկեղեցւոյ պնակի հասոյթներէ	1,355	1.661
Նուիրատուութիւններէ	1.181	1.628
Պարանցիկ երեկոյթէ	3,090	---
Ճաշերէ եւ դաշտագնացութենէ	1.142	4,358
Դրամատան տոկոսէ	10	35
Տարուան եկամուտ	<u>6,778</u>	<u>7,682</u>
<u>Ե Լ Ք</u>		
Պատուասիրութեանց եւ ճաշերու	272	1,613
Եկեղեցւոյ բարեօարդման	1,125	2,586
Շապիկներու շինութեան	300	984
Երաժշտապետի	1,240	839
Պատգամաւորներու	400	---
Զանազան ծախսերու	358	569
Արմէն-Քէպէքի նուիրատուութեան	500	---
Ժխական Խորհուրդի փոխանցուած	---	1,000
Տարեկան ելք	<u>4,195</u>	<u>7,591</u>
Մուտքի առաւելութիւն ի դէմ ելքի	2,583	91
Ելքի առաւելութիւն ի դէմ մուտքի	---	---
Պատրաստ գումար Յունուար 1-ին	599	508
Պատրաստ գումար Դեկտեմբեր 31-ին	<u>3,182</u>	<u>599</u>

ՆԻՒԹԱԿԱՆ ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹՅՈՒՆ
ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ
1 9 7 8 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

Մ Ո Ւ Տ Ք

	<u>31.12.78</u>	<u>31.12.77</u>
Անդամավճարներէ	445	443
Նուիրատուութիւններէ	105	265
Ժաշերէ եւ ուտեստեղէններէ	3,501	1,639
Տարեկան տօնավաճառէ	5,662	4,908
Վիճակահանութենէ	1,301	---
Զբօսապտոյտներէ	2,491	1,837
Դրամատան տոկոսէ	83	86
Զանազաններէ	30	30
Տարուան եկամուտ	13,618	9,208

Ե Լ Ք

Ժաշերու եւ ուտեստեղէններու	1,679	446
Տարեկան տօնավաճառի	1,135	1,514
Վիճակահանութեան	517	---
Զբօսապտոյտներու	1,603	1,359
Խոհանոցի պիտոյքներու	1,262	---
Զանազանք	352	678
Երուսաղէմի սանի	50	50
Ծխական խորհուրդոյ փոխանցուած	8,000	5,000
Տարուան ելք	14,598	9,047
Ելքի առաւելութիւն ի դէմ մուտքի	(980)	161
Պատրաստ գումար Յունուար 1-ին	<u>2,696</u>	<u>2,535</u>
Պատրաստ գումար Դեկտեմբեր 31-ին	1,716	2,696

ՆԻՒԹԱԿԱՆ ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹՅՈՒՆ
ՄԱԲԻԿՈՆԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ
1 9 7 8 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

Մ Ո Ւ Տ Ք

	<u>31.12.78</u>	<u>31.12.77</u>
Նուիրատուութիւններէ	35	35
Գիրքերու վաճառքէ	2,993	2,708
Ձայնապնակներու վաճառքէ	45	---
Ձայներհիզներու	40	140
Հայկական ձայնապնակի Պետական օժանդակութ.	2,250	---
Դրամատան տոկոսէ	10	---
Աննա Նշանեանի համերգէն (զուտ)	---	408
	<hr/>	<hr/>
Տարեկան եկամուտ	5,373	3,291

Ե Լ Ք

Գիրքերու գնման	2,937	1,917
Ձայնապնակներու գնման	34	---
Հայկական ձայնապնակի պատրաստութեան	2,187	---
Ընդունելութիւններու	88	---
Ձանազանք	112	144
Ձայներհիզներու պատրաստութեան	---	338
Ժխական Խորհուրդոյ փոխանցուած	---	500
	<hr/>	<hr/>
Տարեկան ելք	5,358	2,899
Մուտքի առաւելութիւն ի դէմ ելքի	15	392
Պատրաստ գումար Յունուար 1-ին	2,381	1,989
Պատրաստ գումար Դեկտեմբեր 31-ին	<hr/>	<hr/>
2,333*63 (Ձայնապնակի հաշիւ)	2,396	2,381

Հ Ա Շ Ո Ւ Ե Յ Ա Ր Դ Ա Ր
Յ 1 Դ Ե Կ Տ Ե Մ Բ Ե Ր 1 9 7 8

Ը Ն Թ Ա Ց Ի Կ Ի Ն Չ Ք

ՊԱՏՐԱՍՏ ԳՈՒՄԱՐ	Հիմնադրամի	46,499	
	Եկեղեց. Տիկնանց	1,716	
	Դպրաց Դաս	3,182	
	Մշակ. Յանձնախումբ	2,396	
	Ծխական Խորհուրդ	<u>66,184</u>	119,977

ՀՈՂ ԵՆ ԿԱԼՈՒԱԾ (Գնման գինով 1970)

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի	250,000	
Յաւելուած Խորանի եւ զանազանք	<u>22,463</u>	272,463
Եկեղեցւոյ պատկան ինքնաշարժ	6,037	
Պարահանդէսի յետամնաց զանձուէլիք	<u>8,926</u>	14,963
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ		<u>407,403</u>

ՊԱՐՏՔ ԵՆ ԶՈՒՏ ԱՐԺԷՔ

ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏՔԵՐ	Եկեղեց. կալ. տարեկ. 12,500	
	Վարժարանի	1,000

ԵՐԿԱՐ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՐՏՔ

Եկեղեցւոյ վճարում $\% 6\frac{1}{2}$ տոկոս	<u>31,250</u>	44,750
---	---------------	--------

Զ Ո Ւ Տ Ա Ր Ժ Է Ք

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի		<u>362,653</u>
--	--	----------------

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Ի
 ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՈՅ
 1 9 7 9 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

Մ Ո Ւ Տ Ք

	1978 <u>ԿԱՏԱՐՈՒԱԾ</u>	1979 <u>ՆԱՄԱՀԱՇԻԻ</u>
Եկեղեցւոյ պնակէ եւ մոմավառութենէ	10,954	12,000
Եկեղեցւոյ կալուածէն	5,805	6,500
„Բուրաստան” ամսաթերթէ	4,272	5,000
Շաբաթօրեայ վարժարանէ	10,116	10,000
Խորհրդակատարութիւններէ	8,065	8,000
Անդամավճարներէ	14,463	15,000
Նուիրատուութիւններէ	23,107	25,000
„Իւղագին” նուիրատուութիւններէ	7,084	8,000
Եկեղեցւոյ Մարմիններէ	30,093	12,000
Գործունէութիւններէ	19,804	30,000
Օրացոյցէ	421	1,200
Դրամատան տոկոսէ	2,468	4,000
Շիջման Յանձնախումբէ	2,382	---
Գրասենեակի զանազանքէ	937	1,000
	<u>139,971</u>	
Պոլսոյ Պատրիարքարանի	9,525	---
	<u>149,496</u>	<u>137,700</u>

Ե Լ Ք

Պաշտօնէութեան	23,223	25,000
Ինքնաշարժի զնում	6,037	---
Եկեղեցւոյ ծախսերու	8,649	9,000
Շէնքի պահպանութեան	22,447	24,000
Շէնքի գլխաւոր նորոգութեանց	13,750	20,000
„Բուրաստան” ամսաթերթի	4,833	4,500
Շաբաթօրեայ վարժարանի	12,111	12,000
Գրասենեակի ծախսերու	4,857	5,000
Շիջման Յանձնախումբի փոխանցուած	5,000	---
Առաջնորդարանի տուրքի	9,000	17,000
Զանազանքի	369	400
		<u>116,900</u>
Պոլսոյ Պատրիարքարանի	---	9,525
	<u>110,276</u>	<u>126,425</u>
Մուտքի առաւելութիւն ի դիմաց ելքի	29,695	20,800

ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲ 1978

ՏՈՔԹ. ԱՐԹՕ ՏԷՄԻՐՃԵԱՆ՝	Ատենապետ
ՎԱՀԷ Բ Է Թ Լ Ի	Ատենադպիր
ԱՆԱՀԻՏ ԳԱԼԱՅՃԵԱՆ	Անդամներ
ՇԻՇՄԱՆԵԱՆ ԵՐՈՒԱՆԴ	”
ԺՀԱՆԵԱՆ ԱՌԵՏԻՍ	”

ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ՝ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲԻ 1979
(5 ԳՈՂԻ ԸՆՏՐԵԼԻ 1 ՄԱՐՏԼԱՆ ԶՐԶԱՆԻ ԿԱՄԱՐ)

- 1) ԱՂԱՋԱՐԵԱՆ ՆՈՒՊԱՐ
- 2) ԳԱԼԱՅՃԵԱՆ ԱՆԱՀԻՏ
- 3) ԿԱՋԷՐԵԱՆ ԺԻՐԱՅՐ
- 4) ԿԻԻԼԻԻՋԵԱՆ ԼԵՒՈՆ
- 5) ԺՀԱՆԵԱՆ ԱՌԵՏԻՍ
- 6) ԳԱԼԱՊԱՆԵԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏՈՔԹ.
- 7) ՊՏՈՒԿԵԱՆ ԲԵՐՈՎԲԷ
- 8) ՏԷՄԻՐՃԵԱՆ ԱՐԹՕ ՏՈՔԹ.
- 9) ՍՐՄԱԲԷՇԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ
- 10) ԲԷԹԼԻ ՎԱՀԷ

ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ՝ ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՈՅ 1979
(5 ԳՈՂԻ 2 ՄԱՐՏԼԱՆ ԶՐԶԱՆԻ ԿԱՄԱՐ ԸՆՏՐԵԼԻ)

- 1) ԱԼԵԲԵԱՆ ԴԱՐՕ
- 2) ԱՅՎԱՏԵԱՆ ԺԻՐԱՅՐ
- 3) ԱՐԹԻՆԵԱՆ ՊԵՐՃ ՏՈՔԹ.
- 4) ԳԱՐԱԿԷՕՋԵԱՆ ՅԱԿՈՒՐ ՏՈՔԹ.
- 5) ԿՈՒՏՍՈՒՋԵԱՆ ՄԻՍԱԲ
- 6) ԺԱՆՔՈՒԼ ԳԷՈՐԳ
- 7) ԺՀԱՆԵԱՆ ՀՐԱՅՐ
- 8) ՏԷՐ ՕՀԱՆՆԷՍԵԱՆ ՍՐՔՈՒՀԻ
- 9) ԲԷՍԹԷՔԵԱՆ ՅԱԿՈՒՐ
- 10) ԲԷՐԷՍԹԷՃԵԱՆ ՎԱՀԷ

ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ՝ ՀԱՇՈՒՆՔՆՆԻՉ ՄԱՐՄՆԻ 1979
(3 ԳՈՂԻ ԸՆՏՐԵԼԻ 1 ՄԱՐՏԼԱՆ ԶՐԶԱՆԻ ԿԱՄԱՐ)

- 1) ԱՐԱՊԵԱՆ ՎԱՀԱԳՆ
- 2) ԲՐՈՒՏԵԱՆ ԻՎԱՆ
- 3) ԷՍԷՆ ՊԵՐՃ
- 4) ՄԱՆՈՒԿԵԱՆ ԳԷՈՐԳ
- 5) ՉԱՏՐՃԵԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
- 6) ՏԷՐՎԻՇԵԱՆ ԱՐՏԷՆ

*
* *

